

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ  
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԶՈՐՐՈՐԴ ՆԱԽԱԳԱՀԸ

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍԻ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

*Ս. թ. մայիսի 17-ին կայացավ ՀՀ ԳԱԱ ընդհանուր ժողովը՝ նվիրված ԳԱԱ նոր նախագահի ընտրությանը: Նախագահի թափուր տեղի համար ներկայացված էր երեք ակադեմիկոսի թեկնածություն: Թեկնածությունները հանգամանալից քննարկելուց հետո ժողովը որոշեց երեքն էլ թողնել փակ գաղտնի քվեարկության:*



*Քվեարկությունից հետո պարզվեց, որ ձայների զգալի մեծամասնությամբ Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ է ընտրվել 70-ը նոր բոլորած, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսի Մարտիրոսյանը:*

*Ռ. Մ. Մարտիրոսյանը ծնվել է 1936 թ. մայիսի 1-ին Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջանի Մատաղիս գյուղում: Միջնակարգն ավարտելուց հետո ընդունվում է Երևանի պետական համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը, որը 1958-ին գերազանցությամբ ավարտելով՝ աստղաֆիզիկոսի որակավորմամբ աշխատանքի է անցնում Բյուրականի աստղադիտարանում: Նա շուտով տեղափոխվում*

*է ԳԱ ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի նորաստեղծ ինստիտուտը և սկսում մասնագիտանալ քվանտային էլեկտրոնիկայի ուղղությամբ: ԳԱ նախագահ և խոշորագույն աստղաֆիզիկոս Վ. Համբարձումյանի առաջարկությամբ ու աջակցությամբ 1960 թ. Ռ. Մարտիրոսյանը մեկնում է Մոսկվա և ընդունվում ԽՍՀՄ ԳԱ Պ. Լեբեդևի անվ. ֆիզիկայի ինստիտուտի ասպիրանտուրան՝ Նոբելյան մրցանակի դափնեկիր, ակադեմիկոս Ա. Մ. Պրոխորովի գիտական ղեկավարությամբ: Նա մասնագիտանում է հատկապես քվանտային ալիքների չափումների և ուժեղացուցիչների կիրառման ուղղությամբ: 1964-ին հաջողությամբ պաշտպանելով թեկնածուական ատենախոսություն՝ վերադառնում է Հայաստանի ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտ: Այստեղ, նախագահ Վ. Համբարձումյանի հավանությամբ և ԳԱ նախագահության որոշմամբ ստեղծ-*

վում է քվանտային ուժեղացման լաբորատորիա՝ Ռ. Մարտիրոսյանի ղեկավարությամբ: 1970-ին նա նշանակվում է հիշյալ ինստիտուտի գիտական աշխատանքների գծով փոխտնօրեն, իսկ մեկ տասնամյակ անց, 1980 թ. մինչև օրս, նա այդ հաստատության տնօրենն է: Նրա ջանքերով իր իսկ ղեկավարած ինստիտուտում հիմնադրվում է տարաչափ քվանտային ալիքների տիրույթների և քվանտային ուժեղացման ֆիզիկական հիմունքների մշակման գիտական նոր ուղղությունը, որի լավագույն արտահայտություններից մեկն է դառնում 1980-ին նրա պաշտպանած դոկտորական ատենախոսությունը («Քվանտային ուժեղացուցիչների արդյունավետության բարձրացում»): 1984-ին Ռ. Մարտիրոսյանին շնորհվում է պրոֆեսորի կոչում, 1985-ին՝ գիտության բնագավառում ներդրած ծանրակշիռ ավանդի համար նա ընտրվում է ՀԳԱ թղթակից անդամ, իսկ 1990-ին՝ իսկական անդամ:

Այնուհետև սկսվում է Ռ. Մարտիրոսյանի գիտահետազոտական և գիտակազմակերպական գործունեության նոր ու արդյունավետ ժամանակաշրջանը: Շարունակելով իր գլխավորած ինստիտուտում սկսված բարձր զգայնության ռադիոընդունիչ սարքերի ստեղծման ուղղությամբ աշխատանքները, այդ սարքերը հետագայում լայնորեն կիրառվում են բնական պաշարների հետազոտման, ռադիոաստղագիտության, բժշկակենսաբանության բնագավառներում: Այդ աշխատանքների համար Ռ. Մարտիրոսյանը և իր աշակերտները 1988-ին արժանանում են գիտության և տեխնիկայի ասպարեզում Հայաստանի պետական մրցանակի: Գիտահետազոտական արդյունավետ աշխատանքին զուգընթաց, 1965 թ. ի վեր Ռ. Մարտիրոսյանը դասախոսական ակտիվ գործունեություն է ծավալում Երևանի պետհամալսարանի ռադիոֆիզիկայի ֆակուլտետում և իր իսկ նախաձեռնությամբ 1983-ին այդտեղ հիմնադրում գերբարձր հաճախականությունների ռադիոֆիզիկայի ամբիոնը: Նա հեղինակ է ավելի քան 200 գիտական աշխատությունների և մենագրությունների, որոնցից երկուսը լույս են տեսել ԱՄՆ-ում և Շվեդիայում: Նրա գիտական վաստակն ու արգասավոր գործունեությունը հաշվի առնելով՝ Հայաստանի կառավարությունը 1993 թ. Ռ. Մարտիրոսյանին նշանակում է Երևանի պետհամալսարանի ռեկտոր, ուր նա աշխատում է մինչև 2006 թվականը: Այստեղ նրա համար բացվում է գիտամանկավարժական և գիտակազմակերպական աշխատանքների նոր ու լայնահուն ասպարեզ, որտեղ դրսևորվում են գիտնականի և ղեկավար կազմակերպչի նրա նորանոր կարողությունները. դրանցից առաջինը Մայր բուհի բազմաստիճան կրթական նոր համակարգի անցման ծրագրի իրագործումն էր, որ նրա ղեկավարությամբ կատարվեց փայլուն հաջողությամբ: Ապա՝ նրա ղեկավարած տարիներին համալսարանում բացվում են աստվածաբանության, միջազգային հարաբերությունների, ժուռնալիստիկայի, սոցիոլոգիայի նոր ֆակուլտետները, հիմնադրվում են մի քանի նոր մասնագիտություններ (քաղաքագիտություն, հոգեբանություն, արվեստաբանություն), Իջևանում հիմնադրվում է Երևանի պետհամալսարանի մասնաճյուղը, համալսարանում ստեղծվում է արդի միջազգային չափանիշներին համապատասխան նյութատեխնիկական

բազա՝ անհրաժեշտ սարքավորումներով, համակարգչային ու ինտերնետային ցանցով, հարուստ գրականությամբ, կատարվում են լայնածավալ շինարարական և վերանորոգչական աշխատանքներ, սերտանում ու արդյունավորվում են Մայր բուհի կապերը միջազգային գիտակրթական և մշակութային կառույցների հետ, բոլորն էլ այնպիսի մնայուն ձեռքբերումներ, որոնք կմնան և արժանվույն կարձանագրվեն Երևանի պետհամալսարանի պատմության մեջ:

Ակադեմիկոս Ռ. Մարտիրոսյանը տարիներ շարունակ եղել է համալսարանների միջազգային և համաեվրոպական ընկերությունների խորհուրդների անդամ, Հայաստանի պետական բուհերի ռեկտորների խորհրդի նախագահ: Նա մի շարք գիտական պարբերականների խմբագրական խորհուրդների անդամ է և ՀՀ ԳԱԱ «Տեխնիկական գիտություններ» ամսագրի գլխավոր խմբագիրը: Ուր էլ աշխատել է նա, իր բացառիկ գործնական հատկանիշների և մարդամոտ սրտաբաց բնավորության պատճառով իր մնայուն հետքն է թողել այդ հիմնարկներում և կոլեկտիվների հիշողության մեջ:

«Պատմա-բանասիրական հանդեսի» խմբագրությունը, հումանիտար գիտությունների բաժանմունքը սրտանց ողջունում և շնորհավորում են ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանին Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի՝ ՀԱՅԳԻՏԱԿԻ (Մ. Աբեղյանի իմաստալից հապավումն է) նախագահ ընտրվելու և իր արգասավոր կյանքի 70-ամյա հորեյանի կապակցությամբ, ցանկանում նրան քաջառողջություն, երիտասարդական եռանդ ու ավյուն իր նախընտրական ծրագրերի հաջող իրագործման ուղղությամբ, միաժամանակ լիահույս են, որ նորընտիր նախագահն իր գիտակազմակերպական վիթխարի փորձի և ունակությունների գործադրմամբ կանի ամեն ինչ Հայաստանի գիտությունը, մասնավորապես հայագիտությունը հեռանկարային զարգացման նոր ուղու վրա դնելու և նոր թափ հաղորդելու համար: